



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 104

**Ձեռնարկողը՝**

**<<ՆԱՐՎԱՆՆԱ>> ՍՊԸ**

Արմավիրի մարզ, Սահմանապահների 46 շ.

**Գործունեությունը՝**

**Երվանդաշարի բազալտի հանքավայրի արդյունահանման  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն**

Արմավիրի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 104

<14> 12 2018թ.

**Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝	<<ՆԱՐՎԱՆՆԱ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Երվանդաշատ համայնք

Երվանդաշատի բազալտի հանքավայրի տարածքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում, Արաքս գետի ձախափնյա լանջին: Վարչատարածքային առումով հանքավայրը տեղադրված է Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի վարչական սահմանում՝ գյուղից 10կմ դեպի հարավ-արևելք, իսկ Արմավիր քաղաքից 20 կմ արևմուտք, վերջիններիս հետ կապված է ասֆալտապատ և բարեկարգ գրունտային ավտոճանապարհներով: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը ներկայացված է հարթավայրաբլրային ռելիեֆով, տեղադրված է 990-1025մ բացարձակ նիշերի վրա, զբաղեցնում մոտ 0.9հա տարածք:

Արմավիրի մարզի Երվանդաշատի բազալտի հանքավայրի պաշարները հաստատվել են էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի 2018 թվականի մարտի 1-ի թիվ 3 եզրակացությամբ, 2017 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ B +C<sub>1</sub> կարգերով, 42 600մ<sup>3</sup> քանակով: Բլոկների ելքը կազմում է 26.6%:

Հաստատված պաշարները դիտարկվել են որպես երեսապատման բլոկների արտադրման հումք, իսկ բլոկների արդյունահանման ընթացքում առաջացած թափոնները՝ շինարարական խճի արտադրության համար:

Բացահանքի նախագիծը մշակվել է <<ՆԱՐՎԱՆՆԱ>> ՍՊ ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա, համաձայն որի բացահանքի տարածման արտադրողականությունը հաշվարկվել է 1704մ<sup>3</sup> բազալտի մարմող պաշար, որն արդյունահանվելու է 25 տարիների ընթացքում: Բացահանքի սահմաններում ընդգրկված



հաշվեկշռային (մարվող) պաշարների քանակը կազմում է 42600մ<sup>3</sup>, որից կորզվող բազալտների ընդհանուր կազմում է 39250մ<sup>3</sup>, իսկ մակաբացման ապարներինը՝ 32.3հազ.մ<sup>3</sup>:

Նախագծված բացահանքի սահմաններում օգտակար հաստվածքը ծածկող մակաբացման ապարների միջին հզորությունը կազմում է 3.72մ, որից 1.58մ ներկայացված է փոխար ավազկոպճագլաքարային նստվածքներով, իսկ 2.14մ-ը ուժեղ ճեղքավորված մասամբ հողմահարված բազալտներով:

Երվանդաշատի բազալտի հանքավայրի արդյունահանման համար հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են, քանի որ բուն հանքավայրի տարածքում բացակայում են մակերևութային և ստորերկրյա ջրային հոսքերը: Տարածաշրջանում հատուկ պահպանության կարգավիճակ ունեցող բնապահպանական տարածքները կամ պատմամշակութային հուշարձանները նախագծված բացահանքից գտնվում են զգալի հեռավորության վրա, արդյունահանման աշխատանքները չեն կարող որևէ կերպ ազդել վերջիններիս վրա: Հանքավայրի տարածքում բացակայում է նաև ծառափոխության բուսականությունը: Բացահանքի տարածքում կենսաբազմազանության վերաբերյալ կատարվել են դաշտային հետազոտություններ, համաձայն որոնց արդյունքների՝ հանքավայրի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել:

Նախատեսվող գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը բնապահպանական և սոցիալական տեսանկյունից եղել է նպատակահարմարը: Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, նախագծված բացահանքը կունենա հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարություն՝ 185;
- Ամենամեծ լայնություն՝ 76մ;
- Ամենամեծ խորություն՝ 12.0մ:
- Բացահանքի օտարման տարածք՝ 0.91հա:

Բացահանքը կարգաբերելու համար, արևմտյան մասից նախատեսվում է ավտոճանապարհի անցում դեպի բացահանքի բացման առաջին՝ 1012.5մ բարձրության հորիզոն, որի համար կառուցվելու է 192մ երկարությամբ, 8մ լայնությամբ, 86.5% թեքությամբ ճանապարհ: Հաջորդ հորիզոնները մշակվում են այդ ավտոճանապարհից, համապատասխան թեքություններով աստիճանաբար փոփոխելով երկարությունը:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ՝ 2.5մ հանքաստիճանի բարձրությամբ: Անվտանգության բերմայի լայնությունը կկազմի 1.0մ, աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը կկազմի 90°, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 18-20մ: Միաքարի անջատումը զանգվածից կատարվելու է հորատասեպային եղանակով: Միաքարի ճեղքումը բլոկների կատարվում է հիդրավլիկական սեպերի միջոցով, որոնք տեղադրվում են սեպանցքերում: Բլոկների կոպտամշակումը՝ համապատասխան ձև տալու համար, կատարվելու է հարվածապոկիչ մուրճերի օգնությամբ:

Արդյունահանված բլոկների իրացումը նախատեսվում է իրականացնել հանքավայրի տարածքից, բարձունն իրականացնելով սպառողների ինքնաթափերում: Հանույթից առաջացած թափոնները, որոնք իրենցից ներկայացնում են 28810մ<sup>3</sup> բազալտի կտորներ՝



շահագործման տարիներին բարձվում են ավտոինքնաթափեր և օրեկան 1 երթով տեղափոխվում ՋՏԿ՝ խիճ ու ավագ ստանալու համար:

Քացահանքի ջրամատակարարումը նախատեսված է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու և փոշենստեցման /տեխնիկական ջրամատակարարում/ նպատակներով: Տեխնիկական և խմելու ջուրը նախատեսվում է բերել պայմանագրային հիմունքներով սահմանված կարգով՝ Երվանդաշատ համայնքից: Քացահանքում ջրահեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես քացահանքի տարածք թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով: Կենցաղային կեղտաջրերը լցվելու է 25մ<sup>3</sup> տարողությամբ անջրաթափանց հոր, որտեղից սահմանված կարգով պետք է հեռացվեն:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից ընտրված է բուլբոգերային եղանակով ներքին լցակույտաառաջացումը: Շահագործման առաջին տարիներին մակաբացման ապարները հանքավայրի հարավային մասից բուլբոգերի օգնությամբ հավաքվում և տեղափոխվում են N1 լցակույտ /քացահանքի հյուսիսային մասի դեռևս չարդյունահանված տարածքում/ ձևավորելով ներքին՝ ժամանակավոր լցակույտ: Շահագործման 11-րդ տարվանից հետո N1 լցակույտում հավաքված մակաբացման ապարները և քացահանքի հյուսիսային մասի օգտակար հաստվածքը ծածկող մակաբացման ապարները տեղափոխվում են քացահանքի հարավային մասը՝ արդեն արդյունահանված տարածք և փովում, ստեղծելով ներքին լցակույտ:

Հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- մեքենաների վրա գոիչ սարքերի տեղադրում, մթնոլորտային օդը աղտոտումից զերծ պահելու նպատակով,
- աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին փոշեռառաջացման կանխման նպատակով,
- նավթամթերքների պահեստավորում քացահանքի արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում՝ արտահոսքերը շրջակա տարածքներ բացառելու նպատակով,
- ժամանակացույցին համապատասխան երթևեկության կանոնակարգում և անհրաժեշտ վայրերում համապատասխան ցուցանակների տեղադրում՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու համար,
- քացահանքում աշխատողների անվտանգության համար անհրաժեշտ պայմանների և միջոցների ապահովում:

Քանի որ լցակույտ առաջացնող ապարները կուտակվելու են ներքին լցակույտում, հողերի վրա լրացուցիչ ազդեցություն չի ենթադրվում: Հողածածկի պահպանության հիմնական միջոցառում է հանդիսանում խախտված հողերի ռեկուլտիվացման աշխատանքները, որոնք իրականացվելու են քացահանքի շահագործման ավարտին: Այդ աշխատանքների էությունը կայանում է ներքին լցակույտերում 0.82հա մակերեսում պահեստավորված մակաբացման ապարների փռումը և մակերեսային հարթեցումը: Նախ քացահանքի հատակում փռվում ու հարթեցվում են հողմնահարված անդեզիտները և



ժամանակակից առաջացումները, ապա դրանց վրա իրականացվում է հիդրոցանք /կենսաբանական ռեկուլտիվացիա/: Վերականգման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 1,12հա, որի մեջ մտնում են՝ ներքին լցակույտի, արտադրական հրապարակի և բացահանքը սպասարկող ավտոճանապարհների տարածքները: Այդ աշխատանքները կիրականացվեն բուլդոզերի օգնությամբ 10 աշխատանքային օրում: Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 472.7 հազ.դրամ: կենսաբանական ռեկուլտիվացիան կկատարվի 1.72 հա տարածքի վրա, որի ծախսերը հաշվարկվել է 224 000դրամ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսանկյունից տարբեր վտանգավորության թափոններ, ինչպես օրինակ՝ մեքենաներում օգտագործված, փոփոխված յուղեր, քսայուղեր, անվադողեր, որոնք վաճառվելու, կամ հանձնվելու են նման թափոնների գործածության լիցենզիա ունեցող կազմակերպությունների: Կենցաղային աղբի և տարբեր տեսակի թափոնների համար մինչև աշխատանքների սկիզբը Երվանդաշատի համայնքապետարանի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր:

Հանքավայրի շահագործման ընթացքում առաջանում են ընդերքօգտագործման թափոններ, որոնք չեն դասվում վտանգավոր թափոնների շարքին: Բոլոր թափոնների կառավարման միջոցառումների համար նախատեսվել են միջոցառումներ և ծախսեր:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են հնարավոր վթարային և արտակարգ իրավիճակների դեպքում ազդեցությունների նվազեցմանը: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, ջուր, հող) որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների իրականացման համար նախատեսվել են ծախսեր /տարեկան 200.0 հազ.դրամ/:

Բոլոր բնապահպանական միջոցառումները (նախապատրաստական, հանքավայրի շահագործման և փակման փուլերի համար) համապատասխան գործողություններով և ծախսերով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները հավանության են արժանացրել նախատեսվող գործունեության իրականացումը: Գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության՝ ընդերքի և հողերի քաղաքականության վարչությունը, արտակարգ իրավիճակների նախարարության. «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի կողմից տրվել է «Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» եզրակացություն: Գործընթացում վեր հանված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱԳ հաշվետվությունը լրամշակվել է:

**Ամփոփելով** գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին



